

Նպատակ 4: Ապահովել ներառական ու որակյալ կրթություն բոլորի համար և խթանել ողջ կյանքի ընթացքում ուսման հնարավորություններ

Որակյալ կրթությունը մարդկանց կյանքի բարելավման և կայուն զարգացման հիմքն է: Մեծ առաջընթաց է արձանագրվել բոլոր մակարդակներում կրթության հասանելիության և դպրոցներում ընդգրկվածության աստիճանի բարձրացման ուղղությամբ, հատկապես՝ կանանց ու աղջիկների համար: Գրագիտության հիմնական հմտությունները զգալիորեն բարելավվել են, սակայն անհրաժեշտ են ավելի համարձակ ջանքեր՝ համընդհանուր կրթական նպատակների նվաճման ուղղությամբ ավելի մեծ առաջընթացի համար: Օրինակ՝ աշխարհը հասել է աղջիկների և տղաների հավասարության տարրական կրթության մեջ, սակայն սակավաթիվ երկրներ են հասել այդ թիրախին կրթական բոլոր մակարդակներում:

ԻՆՉՈ՞ՒՄ Է ԿԱՐԵՎՈՐ

Չնայած զարգացող երկրներում տարրական կրթության մեջ ներգրավվածությունը հասել է 91%-ի, սակայն 57 մլն երեխա դեռևս զրկված է դպրոց հաճախելու հնարավորությունից:

Ո՞րն է նպատակը

Ապահովել ներառական ու որակյալ կրթություն բոլորի համար և խթանել ողջ կյանքի ընթացքում ուսման հնարավորություններ:

Ինչո՞ւ է կրթությունը կարևոր

Կրթությունն այն բանալին է, որը թույլ կտա հասնել Կայուն զարգացման մի շարք այլ նպատակների: Երբ մարդիկ հնարավորություն ունեն ստանալու որակյալ կրթություն, նրանք կարող են ճեղքել աղքատության շղթան: Հետևաբար, կրթությունն օգնում է կրճատել անհավասարությունները և հասնել գենդերային հավասարության: Այն նաև մեծացնում է մարդկանց՝ ավելի առողջ և կայուն կյանքով ապրելու հնարավորությունը: Կրթությունը նաև վճռորոշ դեր ունի մարդկանց միջև հանդուրժողականության խրախուսման հարցում և նպաստում է ավելի խաղաղ հասարակությունների ձևավորմանը:

Արդյո՞ք կրթության միջոցով մարդիկ կարող են ձեռք բերել ավելի լավ աշխատանք և ունենալ ավելի լավ կյանք

Այո, կրթությունը նվազեցնում է անհավասարությունը: 1985-2000 թթ. 114 երկրների տվյալները ցույց են տալիս, որ կրթության մեկ հավելյալ տարին Ջինիի գործակիցը նվազեցնում է 1,4 տոկոսային կետով:

Սակայն մի՞թե վերջին մի քանի տարիներին կրթական ոլորտում զգալի առաջընթաց չի գրանցվել

Այո, զարգացող երկրներում ներգրավվածությունը տարրական կրթության մեջ հասել է 91%-ի: Համաձայն ՅՈՒՆԵՍԿՕ-ի Վիճակագրության ինստիտուտի (UIS տվյալների կենտրոն) տվյալների՝ 2000-2012 թթ. ընթացքում դպրոց չհաճախող՝ տարրական դպրոցի տարիքի երեխաների քանակը Ենթասահարյան Աֆրիկայում 40%-ից նվազել է մինչև 20%, իսկ Հարավային Ասիայում 20%-ից նվազել է մինչև 6%:

Որտե՞ր են մարդիկ ամենից շատ պայքարում կրթության հասանելիության համար

Դպրոցում չընդգրկված երեխաների կեսից ավելին ապրում է Ենթասահարյան Աֆրիկայում՝ այն դարձնելով դպրոց չհաճախող երեխաների ամենամեծ քանակն ունեցող տարածաշրջանն աշխարհում: Այս տարածաշրջանն ունի շատ երիտասարդ բնակչություն, ուստի մինչ 2030 թ. 3-15 տարեկան 444 մլն երեխայի համար պետք է ապահովի հիմնական կրթություն: Այդ թիվը 2,6 անգամ ավելի է ներկայումս ընդգրկվածների քանակից:

Կա՞ն այնպիսի խմբեր, որոնց համար կրթությունն ավելի դժվար հասանելի է

Այո, կանայք և աղջիկներն այդ խմբերից մեկն են: Չարգացող տարածաշրջաններում երկրների մոտ 1/3-ը տարրական կրթության մեջ չի հասել գենդերային հավասարության: Ենթասահարյան Աֆրիկայում, Օվկիանիայում և Արևմտյան Ասիայում աղջիկները թե՛ տարրական, թե՛ միջնակարգ դպրոց հաճախելու հարցում դեռևս բախվում են խոչընդոտների: Կրթության այս անբարենպաստ վիճակի հետևանքով երիտասարդ կանայք չեն կարողանում աշխատաշուկայում հմտություններ ձեռք բերել և ունեն սահմանափակ հնարավորություններ:

Ի՞նչ կարող ենք անել

- Առաջարկել մեր կառավարություններին՝ կրթությունը գերակայություն դարձնել թե՛ քաղաքականություններում, թե՛ գործնականում:
- Ազդեցություն գործեք ձեր կառավարությունների վրա՝ ստանձնելու հստակ հանձնառություններ՝ բոլորին, այդ թվում՝ խոցելի և մեկուսացած խմբերին ապահովելու անվճար հիմնական դպրոցական կրթությամբ:

- Լոբբինգի միջոցով համոզել մեր կառավարություններին հաստատապես հանձն առնել անվճար տարրական կրթություն ապահովել բոլորի համար, այդ թվում՝ խոցելի և անտեսված խմբերի:
- Խրախուսել մասնավոր հատվածին՝ ռեսուրսներ ներդնել կրթական գործիքների և միջավայրերի զարգացման համար:
- Հորդորել հասարակական կազմակերպություններին՝ համագործակցել երիտասարդների և այլ խմբերի հետ՝ տեղական համայնքներում նպաստելու կրթության կարևորության ընկալմանը:

Կայուն զարգացման նպատակների և 4-րդ նպատակի մասին առավել մանրամասն տեղեկությունների համար կարող եք այցելել հետևյալ հղումով՝

<http://www.un.org/sustainabledevelopment>